

**ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ N 18/3

ք.Երևան

27 մարտի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ «ԳԵՎՈՐԳ» ՍՊԸ-ի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

«ԳԵՎՈՐԳ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ ընկերություն) 2017թ. դեկտեմբերի 20-ից սկսել է իր գործունեությունը և գրանցվել է Մաշտոցի հարկային տեսչությունում: 2018թ. հունվարի 31-ին ընկերությունը դիմել է Մաշտոցի սպասարկման բաժին, որպեսզի ներկայացնի շրջանառության հարկի հայտարարություն: Սակայն տեղեկացվել է, որ այն պետք է ներկայացվի էլեկտրոնային եղանակով, ինչի համար ստացել է էլեկտրոնային ծանուցում: Հետագայում պարզվել է, որ 2018թ. հունվարի 31-ին ընկերության էլեկտրոնային հասցեին եկած հաղորդագրությունը վերաբերվում է ոչ թե շրջանառության հարկի հայտարարությանը, այլ էլեկտրոնային համակարգում մուտք գործելու գաղտնաբառին:

2018թ. փետրվարի 21-ին ընկերությունը դիմել է Մաշտոցի սպասարկման բաժին, որտեղից տեղեկացվել է, որ «ԳԵՎՈՐԳ» ՍՊԸ-ի կողմից շրջանառության հարկի հայտարարագիրը ներկայացված չէ:

Ընկերությունը գործունեությունը վերսկսելու օրվանից առ այսօր գործունեություն չի իրականացրել, որի հետևանքով շրջանառության արդյունք չի ձևավորվել:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է շրջանառության հարկի հայտարարագիրը համարել սահմանված ժամկետում ներկայացված:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

«ԳԵՎՈՐԳ» ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառվել է 19.06.1996թ.: Այնուհետև, 22.12.2010թ.-ից ընկերության կողմից գործունեությունը դադարեցվել է:

Հարկային մարմնի կողմից 16.11.2017թ. ընկերությանը սահմանված կարգով ծանուցվել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու վերաբերյալ: Նույն օրը՝ 16.11.2017թ., ընկերության կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացվել է շրջանառության հարկ վճարող համարվելու

վերաբերյալ հայտարարություն և 2017թ. ընթացքում ընկերությունը համարվել է շրջանառության հարկ վճարող:

2018թ. ընթացքում ընկերության կողմից ներկայացվել է միայն դիմում՝ առցանց լիազոր անձ գրանցելու մասին: Այսինքն, մինչև 2018թ. փետրվարի 20-ը սահմանված կարգով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ընկերության կողմից չի ներկայացվել:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ Հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով հստակ սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), երբ հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Քննարկվող դեպքում «ԳԵՎՈՐԳ» ՍՊԸ կողմից մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին չի ներկայացվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, հետևապես 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող ընկերությունը չի կարող համարվել:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

«ԳԵՎՈՐԳ» ՍՊԸ-ի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ